1114
L V.6

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 1. ՅՈՒՆՈՒԱՐ, 1894.

ՀԱՄԱՅՆՔ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ քաղաքակրթեալ մարդկութիւնը մի լարուած եւ տենդային դրութեան մէջ է։ Մինչեւ այժմ մարդկային ընկերութեան հիմքը կազմող բռնապետական եւ հարստահարական կարգերն այլեւս չ'կարողանալով դիմանալ ճնշուած եւ բռնաբարուած դասակարգի հոսանքի դէմ, կործանելու մօտ են։ Մշակն, արհեստաւորը եւ գործաւորը, մարդկային ընկերութեան այդ կենսատու ոյժը, այլեւս չէ ուզում անասունի նման չարաչար աշխատել կալուածատէրերի, դրամատէրների եւ հարկահաններ անյագ որովայնը պարարտացնելու համար։

Արդիւնաբերող այդ ամբողջ դասակարգը, որ մարդկութեան ստուար մեծամասնութիւնն է ներկայացնում, իւր երկար դարերից 'ի վեր բռնաբարուած իրաւունքները ձեռք ձգել է կամենում։

Բուրժուազական կարգերը օրից օր քայքայւելու վրայ են, իսկ ինքը բուրժուազիան հոգեվարքի սաղնապում սարսափահար, մահամերձի ահռելի, բայց ունայն ճիգերն է թափում անխուսափելի կորստից ինքնիրան փրկելու համար։

Հարստահարիչների եւ հարստահարեալների յարաբերութիւններն օրից օր աւելի թշնամական են դառնում։

Աշխատող դասակարգն ուզում է ձեռք ձգել իւր արիւնով շաղախուած հողը եւ աշխատութեան միջոցները։ Նա կամենում է ազատ եւ խաղաղ սրտով վայելել իւր ճակտի քրտինքով արդիւնաբերած հացը։ Բայց աւա՜ղ, որ ժողովուրդը իւր արեան եւ քրտինքի արդիւնք եղող այդ հացը, իւր արեան գնով վերստին գնելու է ստիպուած։

Հարստահարուած ամբոխը լաւ հասկացած լինելով՝ որ առանց արիւնահեղ յեղափոխութեան իւր նպատակին հասնել անկարելի է, սկսած է արդէն պատրաստուիլ եւ կազմակերպուիլ այդ ուղղութեամբ։

Տնտեսական այդ ահեղ յեղափոխութեան մօտալուտ փոթորկի աղմուկը խուլ կերպով լսւում է արդէն ամեն կողմից։ Դարերից 'ի վեր բռնապետական եւ հարստահարիչ լծի տակ ստրկացած եւ թմրած մարդկութիւնը մի քանի տասնեակ տարիների ընթացքում ուշքի է գալիս, սկսում է նկատողութեան առնել իւր թշուառ դրութիւնը, հեռաւորում է իւր տառապանքի պատճառը եւ մի դարման է փնտռում։ Նա իւր փրկութիւնը յեղափոխութեան մէջն է տեսնում. եւ ամեն վտանգ յանձն առած՝ անյողդողդ դիմում է դէպի նա։

Հարստահարուած մարդկութեան յանկարծակի ցոյց տուած այդ վերակենդանութիւնն ուրիշ բանով չէ կարելի մեկնել, եթէ ոչ վերջին ժամանակներումս ընկերվարական գաղափարաց արած յառաջադիմութեամբը եւ նրանց ժողովրդի հոգոյն խորքը թափանցելովը։

Արդիւնաբերող մեծամասնութեան թշուառութիւնը դարերով է հաշվում, բայց այդ երկար եւ դառն ժամանակում ժողովրդի ընդդիմադրութիւնը շատ թոյլ եւ դիւրընկճելի է եղած։ Ինչո՞ւ. որովհետեւ իւր վիճակի եւ իրաւունքների գիտակցութիւնը եւ գաղափարի ոյժը պակսում էր նրան։ Իւր վիճակի եւ իւր իրաւունքների գիտակցութիւնը պակսում էր նրան, որովհետեւ յեղափոխական պրօպագանդը գոյութիւն չ'ունէր։

Յեղափոխական պրօպագանդը անընկճելի է դարձնում ժողովրդի ապստամբական շարժումը։

Այո՛, յեղափոխական պրօպագանդն է այն մոգական ոյժը, որ իւր ընկերաբանական եւ տնտեսական յօդուածներով ժողովրդի գիտակցութիւնը զարձնում է իւր դէմ գործուած զրկանքներին եւ նրանց ջնջելու միջոցներին վրայ։

Այո՛, յեղափոխական պրօպագանդն է, որ իւր մարդկային ընկերութեան թշուառութիւնը լի սրտից բղխած եւ արդար զայրոյթով շարադրուած յօդուածներով ներկայ կար-

գերի դէմ ապատամբեցնում է ամբոխին, եւ ապագայի յոյսով քաջալերելով, հերոս է դարձնում նրան։

Այո՛. յեղափոխական պրոպագանդն է, որ իւր ոգեւորիչ ոգեղրով հարստահարիչ կառավարութեանց կողմից ժողովրդի յեղափոխական ոգին տակաւին իւր խանձարուրում խեղդելու համար գործ դրած ամէն դժոխային միջոցները չեզոքացնում եւ ժողովրդի ազատութեան եւ բարօրութեան համար ընկած իւրաքանչիւր նահատակի տեղ տասնեակներ է յարուցանում։

«ՀԱՄԱՑՆԲ»-ի միակ նպատակն այդ յեղափոխական պրոպագանդին ծառայելն է։

Հայ ազգի մեծամասնութիւնը յեղափոխական ճգնաժամի մէջ է. ինչպէս ամէն ժողովուրդները նոյնպէս եւ հայ ժողովուրդը դէպի յեղափոխութիւն մղողը իւր տնտեսական անասանելի դրութիւն է, որ աւելի ծանրացած է իւր վրայ իշխող բռնակալների բարբարոսութիւններով։ Անասանելի հարկեր, աներեւակայելի վաշխեր հայ ժողովրդի արիւնը քամեցին. արհեստաւորից իւր գործիքները եւ երկրագործից գութանն ու եզները, մինչեւ իսկ իւր սիրելի հողը խլեցին եւ ստիպեցին խեղճ հայ գիւղացուն իւր հայրենական օճախը թողուլ եւ զանազան մեծ քաղաքների ապականուած մթնոլորտում հալ ու մաշ լինել։ Հերիք չէր որ հայ գիւղացին իւր քրտինքով պարարտացրած հողը իրրեւ վարձաւոր մշակում էր, նրանից հայ պրօլէտարիայ ստեղծեցին, առանց Հայաստանում մեծ արդիւնաբերութեան գործարաններ հաստատելու։ Բագու, Բաթում, Պոլիս, Յունաստան, Բուլգարիա, մինչեւ Ամերիկա տասնեակ հազարներով հայեր իւրեանց մկանների ոյժն են շահագործում 'ի հաշիւ կապիտալիստների։

Հայ ժողովուրդը իւր վիճակին ծանրութիւնը զգացած է եւ նրանից ազատուելու միակ միջոցը գտած, որ յեղափոխութիւնն է։ Հայ երկրագործը, աշխատաւորը եւ այդ աշխատող, բայց ճնշուած դասակարգին նուիրուած եւ նրա ապագայ երջանկութեան իդէալով ոգեւորուած երիտասարդութիւնը ձեռք ձեռքի տուած կռուում են իրանց կաշկանդող շղթաները փշրելու համար։ Հայ յեղափոխական շարժումը հայրենասիրական ֆանատիզմի արդիւնք չէ։ Մի ազգի բուրժուազական դասակարգը միմիայն ընդունակ է ազգային մտափառութիւն ունենալ. իսկ մեզանում վաշխառու հարուստ դասակարգը զուրկ լինելով այդ ազգային մտափառութիւնից էլ, ոչ միայն ոչինչ չէ անում, այլ մինչեւ իսկ թշնամու կողմն է բռնում շատ անգամ։

Հայ յեղափոխական շարժման հիմքը արդիւնաբերող ժողովրդի թշուառ դրութիւնն է եւ նրա նպատակը այդ նահատակուած ժողովրդի տնտեսական բարօրութիւնը։

Հայ ժողովրդի կրած սոսկալի հարստահարութիւնները նրա տնտեսական թշուառութեան բնական հետեւանքներն են։ Նրա կեանքը աւազակների եւ աւազակ կառավարութեան ձեռքում խաղալիք է, որովհետեւ նա միջոց չունի ինքնիրան պաշտպանելու։ Նրա ընտանեկան պատիւը վայրենի կրքերի զոհ է, որովհետեւ նա ստիպուած է հարկերը վճարելու համար ձգել իւր ընտանիքը անպաշտպան եւ հեռանալ։ Նրա գոյութիւնը վտանգի տակ է սովից, տարափոխիկ հիւանդութիւններից եւ գաղթականութիւններից, որովհետեւ նա աղքատ է, որովհետեւ նրա աշխատութեան արդիւնքը խլում են նրա ձեռքից։ Հայ ժողովրդի թշուառ դրութեան չի կարելի դարման անել առանց նրա տնտեսական դրութիւնը բարեփոխելու։

Հայ ժողովրդի իսկական փրկութիւնը նրա տնտեսական ազատութեան վրայ պիտի լինի հիմնուած։

Հայ ժողովրդի տնտեսական ազատութիւնը պիտի լինի միակ աղբիւր իւր երջանկութեան, ինչպէս որ այժմեան տնտեսական յոռի դրութիւնն է նրա թշուառութեան բուն պատճառը։

«ՀԱՄԱՑՆԲԸ» պիտի ուսումնասիրէ հայ արդիւնաբերող ժողովրդի թշուառութեան այդ աղբիւրը եւ պատճառները, պիտի հետեւի նրա յեղափոխական գործողութիւններին, պիտի տեղեկացնէ նրան Եւրոպայի թշուառ գործաւորների եւ երկրագործների յեղափոխական ասպարէզում արած նորանոր քայլերի մասին։ «ՀԱՄԱՑՆԲՆ» օգտուելով տնտեսագիտական եւ ընկերաբանական գիտութիւնների ապարէզում նշանաւոր հանճարների գաղափարներից եւ Եւրոպական յեղափոխական կեանքից՝ պիտի ուսումնասիրէ ընկերութեան ապագայ կազմակերպութիւնը, ուր միայն թշուառ մարդկութիւնը իւր ժբաղդ վիճակը պիտի հանդչեցնէ։

Օ՜ն, յառաջ.

յանուն թշուառ մարդկութեան,
յանուն հարստահարուած հայութեան,
յանուն տնտեսական յեղափոխութեան։

ՀԱՄԱՅՆՔԸ

—

Ազատութեան վարժարանը Համայնքն է։
Էջ. Լաբուլէյ։

Առանց յեղափոխութեան չկայ փրկութիւն— այս անհերքելի ճշմարտութիւնն արդէն հայ ժողովրդի հոգու խորքն է թափանցել, եւ ոչոք չի կարող արմատախիլ անել նրան։ Այս նպատակով գործադրած եւ գործադրուելիք բռնապետական ամեն միջոց ուրիշ հետեւանքի չեն կարող հանիլ, եթէ ոչ բորբոքել ժողովրդի սրտում ծագած այդ նորաժամ հրդեհը։

Հայ ժողովուրդը համոզուած է, որ յեղափոխական գործունէութեամբ միայն կարող է ազատութիւն ձեռք բերել։ Նա ոչ միայն այլեւս ոչինչ չէ սպասում թիւրք եւ ռուս բռնակալների «բարեխնամութիւնից»։ այլ եւ իր յոյսը կարել է նմանապէս Եւրոպական մեծ պետութիւններից, որոնք իսկապէս արդէն քայքայման եւ լուծման վրայ են, չը նայած իրենց արտաքին փայլին եւ ոյժին։

Եւրոպական կառավարութիւնները զբաղուած լինելով իրենց երկրների բանուորների ճնշումով յօգուտ կապիտալիստների կեղեքման, ժամանակ չունեն հայերի համար մտածելու անպամ. եթէ ժամանակ էլ ունենան, միթէ հարստահարիչներից կարելի՞ է ազատութիւն սպասել։

Ինչպէս դէպի մեր բռնապետները, նոյնպէս եւ դէպի Եւրոպական հարստահարիչ կառավարութիւնները, որոնք իրենց աշխատաւորների արդիւնքը ծծում եւ յետոյ, գործադուլների ժամանակ. գնդակահար կոտորում են, մենք ուրիշ զգացում չենք կարող ունենալ, եթէ ոչ ատելութիւն եւ արհամարհանք։

Մենք, մեր վիճակի մասին գիտակցութիւն ունեցող բոլոր հայերս, համաձայն ենք մեր բռնելի շաւղի, եւ մեր գործ ածելու զէնքի մասին։ Այո՛, մեր բոլորիս դրօշակը մի է, որի վրայ կարդացվում է մեր ընդհանուր նշանաբանը. յեղափոխութիւն։

Լինելով համաձայն յեղափոխութիւն յարուցանելու, տարաձայնութիւնը սկսվում է մեր մէջ երբ խնդիրը գալիս է այդ յեղափոխութեան միջոցով մեր հասնելու նպատակին։ Ժամանակի կորուստ արած չենք լինիլ, եթէ մտածենք՝ յեղափոխութիւնից յետոյ ի՞նչ է լինելու։ Երբ երկրագործը իր գութանը դուրս է բերում արտը, արդէն գիտէ ինչ է ցանելու. երբ ատաղձագործը ձեռք է առնում գործիքները, նմանապէս գիտէ, թէ ինչ է շինելու. եւ ինչո՞ւ չպէտք է այսպէս լինի նա՝ եւ հասարակութեան համար. մի՞թէ յեղափոխութիւնը պարզապէս մի գործիք, մի միջոց չէ կերպարանափոխելու հասարակութիւնը, նրան տալու նոր կազմութիւն՝ համեմատ ժողովրդի շահերին եւ պահանջներին։

Ի՛ հարկէ՝ — այո՛։

Եւ հին կարգերը խորտակելու դիտումով, պէտք է, անհրաժեշտ է ունենալ մի ուղեցոյց գաղափար, սկզբունք, իրագործելու հասարակական մի կաղապար (մոդէլ)։

Ո՞րտեղ կարելի է գտնել այդ կաղապարը, եթէ ոչ Եւրոպական պրոլէտարիատի յեղափոխական պատմութեան գեղեցիկ էջերում։ Ընդհանրապէս մեր յառաջադիմութեան համար ամեն ինչ Եւրոպայից ենք վերցնում, մինչեւ իսկ նրա թերութիւնները ու մոլութիւնները։ Էլ ինչո՞ւ համար պիտի փակենք մեր աչքերը, չտեսնել ձեւանանք ա՛յն, ինչ որ ամենադեղեցիկն է, ամենից վսեմն է նոյն Եւրոպայում։ Ինչո՞ւ համար չպիտի սովորենք, հետեւենք այն յեղափոխական դասերին, որ նա է մեզ տալիս։

Մենք պարտաւոր ենք այդ անելու, եթէ ուզում ենք կանգնած լինել մեր կոչման, մեր գաղափարի բարձրութեան վրայ։

Մենք պարտաւոր ենք այդ անել ոչ թէ կուրօրէն, տրկաբար հետեւելով, ընդօրինակելով, այլ գիտակցաբար պատուաստելով նրանց սկզբունքը մեր երկրի յատուկ պայմանների համեմատ։

Եւ այս սկզբունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Համայնական կատարեալ անկախութիւն, ինքնուրոյնութիւն։ 1871 թւականի ժողովրդային մեծ յեղափոխութիւնը, որը յայտնի է «Պարիզի Կոմմունա» անունով, Ալկուայի Կոմմունան, Սան-Լիւկարի Կոմմունան եւ նորերում տեղի ունեցած գիւղական ապստամբութիւնը Քսերէսում (Իսպանիայում), եւ այլն, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հերոսական փայլուն փորձեր իրականացնելու այս սկզբունքը, որը պիտի լինի աշխատաւոր մարդկութեան դէվիզը։

Շրջեցէք ծայրից ծայր ամբողջ աշխարհը, հետաքրքրեցէք մարդկային ազգի պատմութեան խորքը, ո՛րտեղ եւ ո՛ր ժամանակ էլ լինի, դուք կը գտնէք միայն մի ձեւ մարդկային համախմբման, որը հաստատ է, մշտական է, մինչեւ քաղաքական կազմակերպութեան բոլոր ձեւերը՝ կայսրութիւնները, թագաւորութիւնները, հասարակապետութիւնները, եւ այլն, փոխարարձարար իրար յաջորդում եւ անհետանում են, թողնելով իրանց յետեւից միայն ճնշման, կե-

ղեքման եւ թշուառութեան հետքեր, յիշատակներ. այդ հաստատուն ձեւը Համայնքն է։

Այժմեան բոլոր կառավարութիւնները, լինեն միապետական թէ հանրապետական, նրանք նոյնպէս դատապարտուած են անհետանալու, եւ այս անգամ ընդ միշտ, անդառնալի կերպով, թողնելով ազատ ասպարէզ Համայնքների զարգացման եւ յառաջադիմութեան։

Ահա այդ է այն պատմական նոր շրջանը, որի մէջ ոսք է կոխում մարդկութիւնը, եւ մենք, հայ յեղափոխականներս էլ պարտաւոր ենք համարձակ ընթանալ այս ուղղութեամբ։ Մենք կը հարուածենք ներկայ ռէժիմի բուն հիմքը, քարոզելով եւ սերմանելով Համայնական սնկալս ոգին, ապստամբեցնելով նրանց դէմ հենց Համայնքը։ — Բաւական է, որչափ մենք մեզ խաբեցինք օդային անմիտ բացականչութիւններով, բաւական է որչափ անմպատակ եւ մեքենայաբար կրկնեցինք «ազգային անկախութիւն» եւ «հայկական կառավարութիւն» խօսքերը՝ առանց ոչինչ հասկանալու։ Ժամանակ է այդ «ազգասիրական» բացականչութիւնները թողնել. ժամանակ է մեր ազատական իդէալը համայնական պահանջների վրայ հաստատել եւ մեր մարտին էլ նոյն ուղղութիւնը տալ։ Այդ անելով Յեղափոխութեան նպատակը ամենքին պարզ կերպով հասկանալի կը դառնայ, նա գործնական բնաւորութիւն կը ստանայ եւ մատչելի կը լինի նոյն իսկ ամենառամիկ մարդու համար։ Հէնց այդ պատճառով էլ նա անհամեմատ մեծ պաշտպանութիւն կը գտնի ժողովրդից, անհամեմատ բազմաթիւ անձնանուէր կարապետներ եւ գործիչներ կառաջացնի։

—o—

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԹԻՒՐՔԻԱ

ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ. — Անցեալ սեպտեմբերի 8-ն Մարզուանում Թիւրք բռնակալութիւնը մի քանի նոր զոհեր եւս տարաւ յեղափոխական բանակից։ ԲԱՐՍԵՂ ԶԱՔԱՐԵԱՆԸ, ՄԽԻԹԱՐ ՏԷՐ ՆՇԱՆԵԱՆԸ, ՄԻՀՐԱՆ ԶԻՆԿԻՒՃԵԱՆՆ եւ երկու ուրիշ յեղափոխականներ ընկան անհաւասար կռուի մէջ (7 հոգու 600-ի դէմ) արիաբար պաշտպանուելուց յետոյ։

Ներկայ հայկական յեղափոխական շարժումը կենտրոնացած է Ալաշկերտում, Վասպուրականի նահանգում, Մշոյ դաշտում եւ Սասնոյ լեռներում։

Ալաշկերտցիք անկարող լինելով այլեւս տանել տաճիկ կառավարութեան անսահման աճող ճնշումները եւ դրա վրայ աւելացած Համիդէյի քրդական գնդերի աւարառութիւնները, սկսե՛ն գաղթել։ Հարիւրաւոր ընտանիքներ, տուն, տեղ, դաշտ, այգիներ թողած, երեխաները գրկած անցնում են ռուսական սահմանը եւ ապաստարան որոնում։ Սակայն այդ վհատութիւնը ընդհանուր չէ. տեղում մնացածները նոյն կերպով են պատասխանում իրենց թշնամիներին։ Երիտասարդների խմբեր յաճախ յարձակումներ են գործում իրենց դրացի աւազակների վրայ, պրում են նրանց խոտի դէզերը, քշում նրանց հօտերը, և այլն...

Աւելի որոշ բնաւորութիւն ունի Վասպուրականի կռիւը, որը վաղուց է սկսվել և աւելի այժ ստացել վերջին երկու տարիներս։ Կռիւը առաւել սաստիկ է Վան քաղաքի մէջ և ուղղուած է գլխաւորապէս կառավարութեան դէմ, նորա անխիղճ պաշտօնեաների և այն վատարի հայերի դէմ, որոնք իրենց անձնական ապահովութեան համար ստրկանում են կառավարութեան առջև և նրա գործիքը դառնում։ Այսպէս՝ տէռորի են ենթարկված Նշան Թարզիբաշեան (սպանված), Տիգրան Ամիրջանեան (ծանր վիրաւորած), Զրաղեան (սպանված), Մէհմէտ էֆ. (անաջող), Նարի (վիրաւորված), Թէրզիբաշեան Յարութիւն էֆ. (ծանր վիրաւորված), Տէր-Պողոսեան Օհանէս էֆ. (անաջող), Ղլթչեան Յակոբ (սպանված), եւ այլն.....

Իսկ քաղաքից դուրս կռիւը նոյն աւազակաբարոյ քրդերի հետ է։ Նշանաւոր է հրոսակային մի խմբի ընդհարումը յայտնի աւազակ Շաքիրի հետ, որի ժամանակ Շաքիրը կորցրեց իր մարդկանց մեծ մասը, իսկ ինքը ազատվեց միայն իր լաւ ձիու շնորհիւ։

Ուշադրութեան արժանի է և զինակիր խմբ-

բերից մէկի յուսահատական կռիւը. խումբը կորցրեց երեք ընտիր երիտասարդներ:

Ներկայումս Վանայ բերդը լիքն է հայ բանտարկեալներով, որոնց բոլորին մեղադրում են յեղափոխութեան մէջ և որոնց ենթարկում են այնպիսի տանջանքների, որ միայն թիւրք կառավարութեան հանճարը կարող է հնարել: Բանտարկեալներից ոմանք խելագարուել են, ոմանք նահատակվել, ոմանք էլ անձնասպանութիւն գործել:

Մշոյ նահանգում կռիւը մի քիչ այլ կերպարանք է կրում: Մուշ քաղաքը համարեա չէ մասնակցում այդ ընդհանուր մարտին: Սակայն Մշոյ դաշտի գիւղերը տալիս են հերոսութեան, տոկունութեան անընդհատ օրինակներ: Մշոյ դաշտի հրոսակային խմբերը սպանում են մատնիչներին, կառավարութեան գործակալներին, կռւում են իրենց վրայ յարձակվող քրդերի դէմ և աւելի նշանաւորը այն է, որ կառավարութեան զինուորների գործ դրած գազանային տանջանքները անկարող են լինում գիւղական ազգաբնակութեան բերնից մատնութեան մի խօսք անգամ դուրս քաշել: Վերջերումս նահանգում գործող հրոսակային խմբերից մէկը, նշանաւոր Արաբջի առաջնորդութեամբ, կոտորվեցէ քրդերի ձեռքով:

Իսկ Սասունը արդէն պատերազմական դրութեան մէջ է: Պատսպարված լինելով անմատչելի լեռներով, անառիկ ձորերով, Սասունցիք յոյսը իրենց բազկի վրայ դրած վաղուց ի վեր չեն ուզում ճանաչել դահիճ կառավարութիւնը, չեն ուզում նրան հարկ տալ: Վերջերումս մի քանի գիւղեր (Աղբի, Զիթինք, Եղկարդ....), ապստամբվելով, խրկում են կառավարչական հարկահաններին, քշում ուղարկած զօրքերը և միանում Սասնոյ ապատմասին: Կառավարութիւնը չէր կարող հանդարտ աչքով նայել այս յանդգնութեան վրայ և ահա նա գրգռում է շրջակայ քիւրդ բէկերին Սասնոյ դէմ: Հազարաւոր քրդեր պատում են Սասունը: Սասունցիք մերժում են պաշարողների պահանջը՝ հնազանդութիւն յայտնել, վճռած լինելով կամ ապատ մնալ, կամ մեռնել: Քրդերը կատաղի յարձակումն են գործում: Անկնում են բազմաթիւ մարդիկ երկու կողմից էլ: Սասունցիք քաշվում են երկրի խորքերը, ամենևին մտադրութիւն չունենալով հնազանդուիլ: Պաշարված դրութիւնը շարունակվում է մինչև այսօր....

Ուրախալին այն է, որ, ինչպէս ասում են, քրդերի մի մասը միացած է հայերի հետ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Արտասահմանեան թերթերը հաղորդում են. — Մոսկուայի ոստիկանութիւնը, յանկարծակի վրայ է տուել մի սոցիալիստ-յեղափոխական ժողովի, որը կազմած էր 80 հոգուց, որոնցից ութը կանայք են եղել: Դէպքը պատահում է քաղաքից դուրս մի տան մէջ:

Ոստիկանութեան և կազակների վրայ հասնելու ժամանակ 5 հոգի ինքնասպանութիւն են գործում, 32-ը փախչելով ազատում են, մնացածները կալանաւորուում են: Կալանաւորութեան ժամանակ տեղի է ունենում կռիւ, որից 14 ոստիկան ծանր վիրաւորուում են:

ԻՏԱԼԻԱ

Մինչդեռ Հայաստանում յեղափոխական հոսանքը հաղիւ է սկսել բուն ժողովրդային շարժման բնաւորութիւն ստանալ, Սիցիլիան կատարեալ ապստամբական դրութեան մէջ է: Դժուար չէ գուշակել թէ ինչը ստիպեց Սիցիլիայի գիւղացիներին պարզել յեղափոխական կարմիր դրօշակը. պատճառը աղքատութիւնը, ծայրայեղ թշուառ տնտեսական դրութիւնն է: Իտալիայի այս մասի բնակիչները աւելի լաւ չեն ապրում քան հայ երկրագործը: Ահա թէ ինչպէս է նկարագրում Հռոմի մի թերթ կղզու բնակիչների կերած հացը.—

«Դա մի տեսակ հողի նման բան է, ածուխի նման սև, մետաղի պէս հարթ, տեղ-տեղ դեղնագոյն բիծերով ծածկված, որ կարծես թէ մէջը փթածի նշաններ լինեն: Եւ այդ հացը ուտում է՞ն: Ասում են որ՝ այո: Բայց հասկանալի է, որ այն մարդկանց հոգին

որոնք ստիպված են գրանով կերակրուել, այդ հացի գոյնի պէս մուգլանում, խաւարում է:

«Եւ սակայն նոյն գիւղացիների աչքի առջև հանում են ցորենի ոսկեգոյն և հրաշալի հասկերը. նրանք չարչարվում, տանջվում են հողը պարարտացնելով և արևի կրակի տակ հունձքի ժամանակ նրանք խաղացնում են ծանր մանգաղը: Բայց դա մի երազ է, որ երկրագործը տեսնում է բաց աչքերով: Իրականութիւնն այն հացն է, որ ուտում են»:

Այն պատճառները, որ զրկում են Սիցիլիայի գիւղացիներին «ոսկեգոյն և հրաշալի» հասկերից, մի և նոյնը են, ինչ ուրիշ շատ երկրներում, ինչպէս, օրին., մեզ մօտ: Նրանց վաստակի մի մասը վերցնում են աղաները, իբրև հողավարձ, իսկ մնացածի մեծ բաժինը կառավարութիւնն է վերցնում ուղղակի և անուղղակի հարկերով: Կան տեղեր, ուր հարկահանները ամբողջ տներ են ծախել տալիս 10 ֆր. (4 ռուբլի) հարկի պատճառով, ինչպէս օրին. Զիարամոնտե քաղաքում: Բայց աղգաբնակութեան համար ամենածանրը անուղղակի հարկերը, մաքսերը են: Սիցիլիայի գիւղացիները և ծծումբի գործարաններում աշխատող բանուորները այժմ կուում են իրենց թշուառութեան հէնց այդ աղբիւրների դէմ:

Ամբողջ համայնքներ ապստամբվում են, յարձակում են համայնական խորհրդատների և մաքսատների վրայ, այրում են հարկերի և հասոյթների մատեանները, ցրիւ են տալիս մաքսատների գրասենեակները, արժանաւոր կերպով պատժում են պաշտօնեաներին, ազատում են բանտերից ձերբակալված ապստամբներին: Ամբողջ կղզու վրայ հրդեհներ կան. աղաներից վրէժխնդիր լինող ժողովրդի գործն է դա:

Ամենայն արագութեամբ ուղարկուած զօրքերը անզօր են շարժման առաջը առնելու. ապստամբութիւնը շարունակվում է, ընդհանրանում է և կատարեալ յեղափոխութեան է սկսում նմանիլ: Հազիւ մի համայնք յաղթում է զօրքերի միջամտութեամբ և արիւնահեղ կուից յետոյ, արդէն հարևան համայնքն է ապստամբվում, յետոյ հերթը հասնում է մի ուրիշին, մի քանի համայնքներին միատեղ: Կառավարութիւնը չէ համարձակվում կենտրոնացնել զինուորական դնտերը Սիցիլիայում, որովհետև ամենևին վստահ չէ, որ պետութեան միս նահանգները խաղաղ կը մնան. արդէն մի քանի քաղաքներում բացարձակ համակրական ցոյցեր են արուել ապստամբների համար: Զիմանալով ինչ անել, ինչ կերպ յաղթական շարժման առաջը առնել, կառավարութիւնը պատերազմական դրութիւն է յայտարարել Սիցիլիայում: Զը նայած դրան, շարժումը շարունակում է և հետզհետէ աւելի սուր կերպարանք է ստանում:

Թերթիս ծաւալը մեզ թոյլ չէ տալիս առաջ բերել Սիցիլիայի յեղափոխութեան մանրամասնութիւնները: Ապստամբ համայնքների անուններն իսկ պարզապէս թուելը երկար կը լիներ: Յիշենք միայն Մարինէօն, ուր մի արիւնահեղ պատերազմ տեղի ունեցաւ զօրքերի հետ, որի ժամանակ ընկնում են մօտ 30 հոգի և յիսուն հոգի է վիրաւորվում են:

Սիցիլիայի յեղափոխութիւնը բացարձակ համայնական ուղղութիւն է ստացել (որի առաւելութիւնների արծարծելը և տարածելը հայերիս մէջ մեր թերթի նպատակն է): Եթէ այս անգամ այդ շարժումը կատարեալ յաղթանակ էլ չընտանի, նրա նշանակութիւնը կրկին մեծ պիտի լինի, որովհետև նա ցոյց կը տայ ժողովրդին թէ ինչ ուղղութեամբ և ինչ միջոցով կարելի է ազատութիւն ու բարեկեցութիւն ձեռք բերել: Մի ժողովուրդ, որի մէջ մասնաւոր ապստամբութիւններ չեն առաջանում, երբէք չէ կարող մի ընդհանուր յեղափոխութիւն անել: Ապստամբութիւնը յեղափոխութեան անհրաժեշտ նախաբանն է: Այդ տեսակէտից մենք ողջունում ենք Սիցիլիայի ապստամբութիւնները, ինչպէս և Սասնոյ ապստամբութիւնը: Հայ թէ իտալացի, ամեն ժողովրդի համար ազատութեան ուղին մէկ է:

—

ԻՍՊԱՆԻԱ

Անցեալ սեպտեմբերի 24-ին (Ն. տ.) Բարցէլօն քաղաքի բոլոր զինուորանոցները ամայի էին: Զօրքերը դուրս էին տարուած մարշալ Մարտինէս Կամպօսի առջև գօրախաղեր անելու, այդ արիւնախում ծերունու առջև, որը քսան տարուց ի վեր ամբողջ Իսպանիան յետադիմութեան մէջ է պահում: Մարտինէս Կամպօսն է Իսպանիայում միապետութիւնը վերականգնեցնողը, նա է 1873 թ. ի վեր բոլոր ժողովրդային շարժումները անընելի խստութիւններով ջարդողը, նա է որ 1892 թ. փետրուարի 10-ին խեղդել տուաւ չորս գիւղացի յեղափոխականներին Քսէրէսի ապստամբութիւնից յետոյ: Եւ այդ մարդը, խաւար յետադիմութեան այդ կենդանի պատկերացումը, իսպանական ժողովրդի աշխատաւոր և թշուառ դասի այդ ոխերիմ թշնամին էր, որ պատրաստվում էր ցոյց տալ հաւաքուած ամբոխին իր սուրների թիւը, իր զինուորների վարժութիւնը և այն վտանգը, որին կենթարկուի ժողովուրդը, եթէ մի անգամ էլ փորձէ թոթափել բռնութիւնը:

«Կարգը», այսինքն յետադիմութիւնը, կատարեալ յաղթանակ տարած էր երևում:

Ըստ երևոյթին չկար այդ րոպէին մի այնպիսի ոյժ, որ յանդգնէր գլուխ բարձրացնել այդ զօրեղ մարշալի դէմ, որի փողոց դուրս գալն իսկ, ձիով, շրջապատուած զօրապետներով և բոլոր իր շտաբով, ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի անարգանք, որ յաղթողը ձգում է յաղթուողի երեսին:

Այդ անարգանքի դէմ նոյն ինքը ամբոխը անոյժ էր մի որևէ բան անելու. ամբոխը ատում էր այդ խաչերով և պատուանշաններով զարդարած դահիճին, բայց և այնպէս համբերում էր: Եւ այդ անարգանքին մի հասարակ բանուոր, մի ան ձնանուէր անհատ գիտցաւ պատասխան տալ: Ամենափառաւոր րոպէին, երբ մարշալը առաջանում էր մի հիանալի նժոյգի վրայ նստած, իսկ ամբոխը արագաբար ճանապարհ էր բանում նրա առջև, մի մարդ բաժանվում է ամբոխից. խկոյն և եթ երկու ռումբ պայթում են մէկը միւսի յետևից մարշալի ձիու ոտների տակ:

Դժբախտաբար արդար վրէժխնդրութիւնը չը հասաւ իր նպատակին: Մարտինէս Կամպօսը միայն թեթև վէրքեր ստացաւ, նմանապէս և երկու գէնէրալներ, մի թիկնապահ և երկու ոստիկաններ: Մի ոստիկան և ձին սպանուեցին:

Թէև ռումբը վրիպեց իր նպատակից, բայց այդ հանդգնամանքը ամենևին չնուազեցրեց նրա բարոյական նշանակութիւնը: Դա մի ճարտար դաս եղաւ, որ ցոյց է տալիս թէ ժողովրդին ճնշողները միշտ անպատիժ չեն մնալ նոյն իսկ երբ ժողովուրդը յաղթուում է:

Եւ այդ դասից լաւ կանէին, եթէ օգտուէին ուրիշ երկրների բռնակալ բարձր աստիճանաւորները....

Այդ արդարադատական գործը կատարողը իսկոյն ձերբակալուեց. նրան բանտ նստացրին և յետոյ զինուորական դատաստանով մահի դատապարտեցին: Նրա անունն է Պաուլինօ Պալլաս, 31 տարեկան, ընտանիքի տէր:

Հոկտեմբերի 6-ին (Ն. տ.) Պալլասին գընտակահար արին: Նա մեռաւ հպարտ կերպով:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԻ ԵՐԵՍ

1848 թ. Փետրվարի 21-ը:

Այդ երեկոյ ազդեցիկ բանուորները մարտի էին պատրաստվում: Ծանր դրութիւնից թելադրուած և ապագայի յոյսով ոգևորուած՝ բորբոքիչ եւ համոզիչ յորդորներ էին կարդացվում: Ես միշտ կը յիշեմ այն կրակոտ յորդորը, որ արտասանեց մի գունատ երիտասարդ Սէն-Մարսէլ թաղի մի մութ աղքատ սենեակում: Երբ նա խօսում էր, նրա աչքերից բարկութեան կայծեր էին ցայտում: Նա հրաւէր էր կարդում, հրաւէր, որ ոգևորիչ էր ինչպէս Օգիւստ Բարբիէի տաղերը և մեայլ որպէս Տացիտի պատմութիւնը. և նրա խօսքը հնչում էր վայրենի ճարտարախօսութեամբ:

Մեծ էր նրա թողած տպաւորութիւնը և նա թափանցեց մինչև իմ հոգու խորքերը: Աւաղ, այդ հրաւէրը արտասանողին վիճակուած չէր դրա նմանուրիշ յորդորներ ևս կարդալու. հաւատարիմ իր քարոզին, անձնական օրինակը միացնելով իր խօսքերին, նա միւս օրը հրացան վերցրեց և անյայտ կերպով ընկաւ մարտի մէջ, ինչպէս միւս շատերը: Այդ ապստամբական հրաւէրը, թէև անկատար և անմշակ, լի էր ոգևորութեամբ և մթութեան մէջ վառուող կրակի պէս, նա տարածում էր իր շանթերի լոյսը շուրջը նսաած ունկնդիրների վրայ: Ահաւասիկ այդ ճառը.

—«Քսան դարերի ընթացքում, մէջքերդ ծռած ձեր քրտինքով ցօղած դաշտերի վրայ, սերնդից սերունդ դուք ստրուկ էք մեծացել ձեզնից հարուստ, բայց փչացած և ձեզպէս մահկանացու մարդկանց ձեռքին: Դուք նրանց տուել էք, թէև այդ մարդիկ ձեզնից բնաւ աւելի տեղ չեն բռնելու գերեզմանատան սև հողի մէջ կամ մարմարեայ արձանաքարերի տակ, բայց դուք առանց տրտնջալու տուել էք նրանց ձեր արիւնը, ձեր կեանքը: Նրանք խլել են ձեզանից ձեր հանգստութիւնը, ձեր կայքը, ձեր ազատութիւնը՝ մարդուս այս հարուստ գանձը, որով դուք չէք ուզում հարստանալ: Նրանք խմել են ձեր քամած գինիների ամենաընտիրները, նրանք կերել են ձեր հունձերի արդիւնքը, նրանք սպանել են իրենց պիղծ փաղաքշանքներով ձեր արեան, ձեր արգանդի պտուղները — ձեր կոյսերին, ձեր կանանց, ձեր քոյրերին և ձեր մայրերին, երբ սոքա դեռ գեղեցիկ և ջահիլ էին: Նրանք ձեր գլխին առատ-առատ հարկեր, տուրքեր, ճնշումներ, աղքատութիւն և թշուառութիւն թափեցին: Նրանք ձեզ անարգեցին, ձեզ մինչև ի մահ ճգմեցին: Եւ դուք վրդովման, բարկութեան, ապստամբութեան մի ձայն անգամ չը հանեցիք: Դուք թոյլ տուիք, որ ոչխարի պէս ձեզ խուզեն, ձեր կաշին բերթեն. դուք թողիք, որ ձեզ սովամահ անեն. դուք համբերեցիք, դուք տարաբ բռնութեան բոլոր մաբեր հարուածները: Եւ դուք համբերեցիք այդ ամենին, որովհետև ձեր հոգևոր հայրերը, ձեր աշխատանքով չաղացած աղաների ու բէկերի այդ ամօթալի կողմնապահները ձեզ հրամայում էին համբերել յանուն մի ամենաբարի և ներողամիտ Աստծու, որին ատելու համար դուք չունէիք ո՛չ խելք և ո՛չ էլ կամք: Իսկ այժմ: այժմ այդ մարդիկ, որոնց կեանքը ձեզ համար մահ էր, որոնց երջանկութիւնը ձեր դրկանքներից էր շինուած, որոնց ազատութիւնը ձեր ստրկութիւնից էր առաջանում, որոնց բաղդը ձեր դժբաղդութիւններից էր հիւսած և հարստութիւնը ձեր աղքատութիւնից ստեղծուած. այդ մարդիկ, որ արդէն դերեզման են իջել ձեր նախնիքների հետ, ժառանգներ են թողել այս աշխարհում. զաւակները հայրերին նմանելով, մի և նոյնը են անում ձեզ հետ: Բայց դուք՝ դուք այլ ևս չէք նմանում ձեր պապերին, որովհետև նրանց մահից յետոյ մարդկային միտքը զարգացել, առաջացել է, յեղափոխական հոգին թափանցել է արդէն մինչև իսկ խրճիթների մէջ: օդի հետ մարդս շնչում է ազատութեան և հաւասարութեան դրախտային բուրմունքները: Եթէ դուք այ ևս չէք նմանում ձեր պապերին, մի հետևէք նրանց օրինակին: Մա՛րդ եղէք և ո՛չ ստրուկներ: Զգեցէք, թօթափեցէ՛ք ձեր ցնցոտիների հետ և ձեր ուղեղի պատառոտած զգեստները.....

Ընդունեցէ՛ք ձեր մէջ նոր վարդապետութեան առաքեալներին և շուտով կը ծագի ձեզ համար, ինչպէս և բոլորիս համար, այն օրհնեալ օրը, որ մենք երազել ենք և բոլոր սրտով մաղթել.....

Ալֆրէդ Դէլվօ

«ՀԱՄԱՅՆՔ»-ի համարները ձրի կուղարկուեն ցանկացողներին: Դիմել հետեւեալ հասցէով.
W. Voynich. (Hamaïnk). 3, Iffley Road, 3. Hammersmith, W., London.

Փարիզ. Միջազգային տպարան.